29 նոյեմբեր, 2017թ. Երևան

Կայացավ Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի համաժողովը

Նոյեմբերի 28-ին, տեղի ունեցավ Արևելյան գործընկերության (ԱԼԳ) քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի համաժողովը:

«ՀՀ-ԵՄ նոր համաձայնագրի ստորագրումը շնորհավորանքների առիթ է: Եվ այժմ մենք մտածում ենք այն մասին, թե ինչպես անել այնպես, որ Հայաստանի շարքային քաղաքացիները զգան, որ նոր բան է տեղի ունենում»,- ասաց Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Պյոտր Սվիտալսկին:

Նա նաև նշեց, որ ԵՄ-Հայաստան կամուրջն ամրապնդելու հարցում մեծ է քաղաքացիական հասարակության անդամների դերը. «Պետք է ՔՀԿ-ներն ընկերական ճնշում գործադրեն, մշտադիտարկեն համաձայնագրի իրականացման գործընթացը, որպեսզի համագործակցությունն իսկապես տեղի ունենա»,- նշեց դեսպանը:

Նշենք, որ համաժողովը կազմակերպվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում:

Ծրագրի ղեկավար Կարեն Զաղոյանը համաժողովին ներկայացրեց ծրագրի նպատակներն ու մինչ այժմ կատարված աշխատանքները:

«Ծրագիրն ունի առանձնահատուկ նպատակներ, որոնցից են ծրագրի 9 թիրախային ոլորտում խնդիրների հատկորոշումը և փաստերի հիման վրա հանրային քաղաքականությունների մշակում և իրականացում, ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիայի ցանցի կարողությունների ուժեղացում, կոալիցիաների ստեղծում և զարգացում, ինչպես նաև ծրագրի թիրախային ոլորտներում հանրային բյուջեների և քաղաքականության նկատմամբ հանրային վերահսկողության իրականացում և զարգացում, ՏԻՄ-երում և կենտրոնական պետական մարմինների հետ հանրային քաղաքականությունների մշակման բնագավառում կառուցողական և կայուն երկխոսության ստեղծում»,- ասաց Կարեն Զաղոյանը:

Ծրագրի ղեկավարը նշեց նաև, որ 120 ՔՀԿ-ի համար, որոնք կընտրվեն մրցութային կարգով, կիրականացվի ուսուցում՝ փաստերի վրա հիմնված քաղաքականությունների մշակում և կառավարության հետ կայուն և կառուցողական երկխոսության իրականացում: Դասընթացները կիրականացվեն Հայաստանում Ամերիկյան համալսարանում:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 00

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

ԱԼԳ Քաղհասարակության ֆորումի ղեկավար կոմիտեի անդամ, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահ Հայկուհի Հարությունյանը ներկայացրեց ֆորումի 9-րդ՝ Տալլինի համաժողովի արդյունքները. «Կարևոր խնդիր էր ֆորումի գործունեության ներքին բարեփոխումների ռազմավարության ընդունումը: Այս հարցերի վերջնական համաձայնությունների համար որոշակի խոչընդոտներ առաջացան և դրանց հաստատումը կամ վավերացումը ֆորումի կողմից Տալլինում հետաձգվեց»:

Նա նաև նշեց, որ փաստաթուղթը քննարկման կդրվի ազգային պլատֆորմներում, այնուհետև մինչև տարեվերջ ֆորումը կամփոփի արդյունքները:

ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային համակարգող, Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը կարևորեց կառավարություն-քաղաքացիական հասարակության հարաբերությունների մեխանիզմների մշակումը, այդ թվում կառուցողական երկխոսությունը: Պետք է կառավարության հետ կառուցողական երկխոսության միջոցով թիրախային ոլորտներում ձևավորել աշխատանքային խմբեր, որտեղ մշտապես ներկայացված կլինեն և՛ պլատֆորմի մասնակիցները, և՛ կառավարական օղակների ներկայացուցիչներ:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոպ» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ 9 թիրախային ոլորտում, որոնցից են արդարադատությունը, կրթությունը և բիզնեսը:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00; հեռ.՝ 540199; ֆաքս՝ 580299; URL՝ http://www.armla.am, http://ccd.armla.am, էլ. փոստ՝ info@armla.am:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն

Հեռախոս՝ +37410 54 64 94

Իրավաբանների հայկական ասոցիացիա

Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուժերը: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: